ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
14 մայիսի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 54 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Մարիա Աղաջանովան, քաղաքապետի խորհրդական Աշոտ Շահբազյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, իրավաբանական վարչության պետի տեղակալ, վարչության պետի պարտականությունները կատարող Արմինե Ստեփանյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Ջհանգիրյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2024 թվականի հունիսի 25-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 58, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արթուր Իսպիրյանն իր դիմումի համաձայն դադարեցրել է ավագանու անդամի իր լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 13-ի հ.13 արձանագրության համաձայն՝ Երևանի ավագանու Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է

Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Քրիստինե Վարդանյանին:

Երևանի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Գրիգորի Երիցյանը և առաջարկվեց նիստի օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ներկայացված առաջարկությունը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 26, դեմ՝ 30, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանը ու առաջարկեցին նիստի օրակարգում ընդգրկված զեկուցվող հարցերը քննարկել չզեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ներկայացված առաջարկությունը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 7, դեմ՝ 46, ձեռնպահ՝ 1

Առաջարկը չընդունվեց:

Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանն առաջարկեց Երևանի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի նիստի օրակարգի նախագծի 28-րդ՝ «Սվետլանա Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» զեկուցվող հարցը քննարկել չզեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան, իսկ 27-րդ՝ «Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը հաստատելու մասին» չզեկուցվող հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 22, ձեռնպահ՝ 2

Առաջարկն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի նիստի օրակարգը.

1. Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքում Հովհաննես Բաղալյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքում Մկրտիչ Սարգսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)

4. Երևան քաղաքում Էմիլ Դիլանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին: (Զեկուցվող)
5. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
6. «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
7. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
8. «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Զեկուցվող)
9. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
10. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
12. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
13. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
15. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
16. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
17. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
18. Հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
19. Գնման ընթացակարգը մասնակի չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին: (Զեկուցվող)
20. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 44-Ն և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 45-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին: (Զեկուցվող)

21. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
22. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին: (Չզեկուցվող)
23. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
24. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի փետրվարի 11-ի N 194-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
25. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
26. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
27. Սվետլանա Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Չզեկուցվող)
28. Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը հաստատելու մասին: (Զեկուցվող)
29. Երվանդ Մանարյանի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 26, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշման 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 27-րդ հարցերը:

Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ վերոնշյալ 2-27-րդ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Երևան քաղաքում Հովհաննես Բադալյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Վերին Անտառայինի՝ Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Սարալանջի փողոց ընկած հատվածն անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, նշանավոր հայ երգիչ Հովհաննես Բադալյանի անվամբ՝ «Հովհաննես Բադալյան փողոց»:

3. Երևան քաղաքում Մկրտիչ Սարգսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Քանաքեռի 14-րդ փողոցն (սկսվում է Զաքարիա Քանաքեռցու փողոցից, հատում 15-րդ փողոցը, հասնում մինչև Քանաքեռի 14-րդ փողոցի հ.32 հասցե) անվանակոչել բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ Մկրտիչ Սարգսյանի անվամբ՝ «Մկրտիչ Սարգսյան փողոց»:

4. Երևան քաղաքում Էմիլ Դիլանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մյասնիկյան պողոտայի հ.16/9 հասցեի հարակից տարածքից սկսվող և մինչև Սերո Խանզադյան փողոցի 1-ին նրբանցք ձգվող ճանապարհահատվածն անվանակոչել հայ սովետական էլեկտրատեխնիկայի մասնագետ, ԽՍՀՄ առաջին էլեկտրամոբիլների ստեղծող, Երկրորդ համաշխարհային պատերազմի Արևելյան ռազմաճակատի գործողությունների մասնակից, կործանիչ-օդաչու Էմիլ Դիլանյանի անվամբ՝ «Էմիլ Դիլանյան փողոց»:

5. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 4,034,845,800,0 (չորս միլիարդ երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 4,034,840,000.0 (չորս միլիարդ երեսունչորս միլիոն ութ հարյուր քառասուն հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 403,484 (չորս հարյուր երեք հազար չորս հարյուր ութսունչորս) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 9,188,380,000 (ինը միլիարդ հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) դրամ, որը կազմում է 918,838 (ինը հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսունութ) հատ 10.000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

6. «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 70,000,000 (յոթանասուն միլիոն) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 69,998,022 (վաթսունինը միլիոն ինը հարյուր ինսունութ հազար քսաներկու) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 14,394 (տասնչորս հազար երեք հարյուր ինսունչորս) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 4,863 (չորս հազար ութ հարյուր վաթսուներեք) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 688,167,993 (վեց հարյուր ութսունութ միլիոն հարյուր վաթսունյոթ հազար ինը հարյուր ինսուներեք) դրամ, որը կազմում է 141,511 (հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր տասնմեկ) հատ 4,863 (չորս հազար ութ հարյուր վաթսուներեք) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

7. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 10,751,600 (տասը միլիոն յոթ հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր) դրամի սահմաններում՝ կանոնադրական կապիտալի՝ 10,750,000 (տասը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամի չափով ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 1075 (մեկ հազար յոթանասունհինգ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 78.050.000 (յոթանասունութ միլիոն հիսուն հազար) դրամ, որը կազմում է 7805 (յոթ հազար ութ հարյուր հինգ) հատ 10000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

8. «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 և 2024 թվականների բյուջեներից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 358,950,000 (երեք հարյուր հիսունութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) դրամի չափով կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 59,825 (հիսունինը հազար ութ հարյուր քսանհինգ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 6000 (վեց հազար) դրամ անվանական արժեքով, տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 600,396,000 (վեց հարյուր միլիոն երեք հարյուր ինսունվեց հազար) դրամ, որը կազմում է 100,066 (հարյուր հազար վաթսունվեց) հատ 6000 (վեց հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

9.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ոսկերիչների փողոց հ. 2/5, 2/6 և 2/7 հասցեներում հասարակական նշանակության շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց հ. 103/5 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Մ.Մելքոնյան փողոց 24 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/10 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/12 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Սևանի փողոց հ. 21/4, 21/12 և 21/13 հասցեներում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման և գոյություն ունեցող ադմինիստրատիվ շենքի վերակառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ

սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

15.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 1/10 հասցեում պահեստային շինությունների կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

16.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արգիշտի փողոց հ. 11/15 հասցեում բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

17.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Աճառյան 1 հասցեում «Տանիա Չիչմանյանի անվան պուրակի (էվոլյուցիոն, զգայական, խոտաբույսերի պարտեզներ և խաղահրապարակ) նախագիծ Երևանի բուսաբանական այգում» նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

18. Հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ» հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել լիազոր մարմնին:

19. Գնման ընթացակարգը մասնակի չկայացած հայտարարելու թույլտվություն տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետարանին իր կարիքների համար ապրանքների մատակարարման նպատակով 2024թ. ապրիլի 5-ին հայտարարված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-24/22 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ և 9-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ գնման պահանջի դադարման հիմքով:

20. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 44-Ն և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 45-Ն որոշումների մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» N 44-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Որոշման 1-ին կետից հետո լրացնել նոր 1.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Երևան համայնքի ենթակայությամբ գործող պետական և համայնքային ուսումնական հաստատությունների կառուցման և վերակառուցման համար՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության համար 2024 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2024 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:».

2) Որոշման 4.5-րդ կետից հետո լրացնել նոր 4.6-րդ և 4.7-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա իրականացվող շինարարական աշխատանքների կատարման ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում պետական մարմնի կամ համապատասխան որակավորում ունեցող անձի եզրակացության հիման վրա փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված շինարարական աշխատանքների կասեցման օրվանից մինչև նախագծային փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու օրն ընկած ժամանակահատվածում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

4.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում բազմաբնակարան շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների 1 անգամ և մինչև 5 ամիս ժամկետով երկարաձգման համար 2024 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե կառուցապատողը մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը դատարանի օրինական ուժի մեջ դատական ակտով ճանաչվել է սնանկ: Սույն կետով սահմանված արտոնության կիրառման համար հիմք է կառուցապատողին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան համայնքում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 45-Ն որոշման 1-ին կետի 10.3-րդ ենթակետից հետո լրացնել նոր 10.4-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.4) Երևան քաղաքի վարչական տարածքում Երևան համայնքի ենթակայությամբ գործող պետական և համայնքային ուսումնական հաստատությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝

ա. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի սահմանների ճշտման և (կամ) հողհատկացման հիմքերի վերականգնման դեպքերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

բ.նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն

կազմելու) համար 2024 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:»:

21. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1.Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

22. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ն.Չարբախ հ.348 հասցեներում գտնվող Վարդգես Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.հ.03102023-01-0187, 03102023-01-0188 վկայականներ) 0.22039հա և 0.06323հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

23. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ներքին Չարբախ փողոցի հ.22 հասցեում գտնվող Արամ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0.03945հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունն փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

24. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի փետրվարի 11-ի N 194-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևանի քաղաքապետի 2020 թվականի փետրվարի 11-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» N 194-Ա որոշման 1-ին կետում «հինգ տարի» բառերը փոխարինել «մինչև 2030 թվականի օգոստոսի 1-ը» բառերով:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2020 թվականի մայիսի 12-ին կնքված հ.463 գույքի անհատույց օգտագործման պայմանագրում սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման գործընթացը:

25. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 50-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6-րդ գլուխի աղյուսակը լրացնել նոր՝ 8-12-րդ կետով՝ համաձայն հավելվածի:

26. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» N 50-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) Հավելվածի 3-րդ կետում «6-րդ կետի,» բառերը փոխարինել «6-րդ, 6.1-ին,» բառերով.

2) Հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամանները կարող են Երևանի քաղաքապետի որոշմամբ առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող տարածքներում տեղադրելու նպատակով:».

3) Հավելվածի 41-րդ կետից հետո լրացնել նոր 41.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.1. Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամանների օգտագործման համար սահմանել ամսական վարձավճար՝ յուրաքանչյուր աղբամանի համար 75000 ՀՀ դրամ.»:

27. Սվետլանա Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն հայ անվանի դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սվետլանա Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շենքի ճակատային հատվածում /Վազգեն Սարգսյան փող. 7/ փակցնելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2024 թվականի մայիսի 14-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

28. ԼՍԵՑԻՆ – Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև կնքված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար
2. Արտակ Զեյնալյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
3. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Հայկ Սահակյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
5. Տիգրան Պետրոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
6. Արման Բաբաջանյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ.Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Ս. Հայկազյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Հայկ Գրիգորյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Արտակ Զեյնալյան - Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
3. Սեդա Տեր-Մինասյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Ելույթների վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետով՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Գրիգորի Երիցյանի պահանջով հայտարարվեց 15 րոպե ընդմիջում:

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 11.17-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2023 թվականի նոյեմբերի 29-ին կնքված «Երևանի էներգաարդյունավետություն փուլ 2» ծրագրի իրականացման համաձայնագիրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 12, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

29. ԼՍԵՑԻՆ – Երվանդ Մանարյանի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երվանդ Մանարյանի արձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

3. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Լ.Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գ. Սարգսյանը և բնապահպանության վարչության պետի պաշտոնակատար Ս. Հայկազյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արամ Թորոսյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2. Ռոբերտ Ծովյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Մանարյանի արձանի տեղադրմանը՝ քաղաք Երևան, Սայաթ-Նովա պողոտա 4 հասցեին հարող տարածքում՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 59, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան